ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» հոկտեմբերի 2011թ. **N- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 6-րդ կետի 3-րդ ենթակետի և 2010 թվականի նոյեմբերի 26-ի N 162-Ն որոշման 3-րդ կետի դրույթները `

Երևան քաղաքի ավագանին *որոշում է.*

1.Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

1) Երևան քաղաքի սեփականություն համարվող 10000 հատ տպաքանակով Երևան քաղաքի մասին ուղեգրքերն ուղղակի վաճառքի ձևով օտարել ձեռք բերողներին՝ ուղեգրքերի պատրաստման և տպագրության պայմանագրային արժեքից ոչ պակաս գնով:

2) Երևան քաղաքի սեփականություն համարվող 10000 հատ տպաքանակով Երևան քաղաքի մասին ուղեգրքերը նվիրել Երևանի քաղաքապետարանի հյուրերին, որպես Երևանի քաղաքապետարանի հուշանվեր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի զբոսաշրջության զարգացման միջոցառումների համալիր ծրագրում կարևորվել է Երևան քաղաքի զբոսաշրջային և երիտասարդական ուղեցույցի ստեղծումը, որի հիմնական նպատակն է ճանաչելի դարձնել Երևանը զբոսաշրջիկների, քաղաքի հյուրերի շրջանում, ներկայացնել մայրաքաղաքը նորովի ոչ միայն մշակութային, հարուստ պատմություն ունեցող, այլև ժամանակակից և ուրախ քաղաքի տեսքով: Այս նպատակով տպագրական աշխատանքներն իրականացնելու համար գումար նախատեսվեց Երևանի քաղաքապետի 15.06.2011թ. «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում վերաբաշխում և Երևանի քաղաքապետի 2011 թվականի հունվարի 18-ի հ.86-Ա արաշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» հ.2501-Ա որոշմամբ: Այնուհետև 30.08.11թ. կնքվեց ՈԵՔ-ԱՇՁԲ-11/52 ծածկագրով պայմանագիրը ուղեգրքի տպագրման աշխատանքների իրականացման՝ համաձայն քաղաքային իմիջային ու երիտասարդական ուղեգրքերի պատրաստման և տպագրման աշխատանքների տեխնիկական բնութագրի՝ 20000 տպաքանակով և 39.98 մլն դրամ ընդհանուր արժեքով:

Հաշվի առնելով, որ նշված ուղեգրքերի նպատակն է ճանաչելի դարձնել Երևանը զբոսաշրջիկների, քաղաքի հյուրերի շրջանում, անհրաժեշտ է կազմակերպել իրացման գործընթացը՝ 10000 քանակի ուղեգրքերի տարածումը, որպես Երևանի քաղաքապետարանի հուշանվեր՝ տրամադրելով քաղաքի հյուրերին, իսկ մնացած 10000 հատ ուղեգրքերը վաճառելով թիրախային խմբերին՝ ինքնարժեքից ոչ պակաս գնով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի օտարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքի օտարման մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ